**ՄՀԵՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
*ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ*
hamher@yandex.ru
ID: 0000-0002-0719-8860
DOI:10.59523/1829-4596.2024.1(28)-147

# 2016 Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՌԱԶՄԱՐՇԱՎԻՑ ՀԵՏՈ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

**Բանալի բառեր՝** Արցախի Հանրապետություն, պաշտպանության բանակ, շտաբ, ռազմարշավ, անձնակազմ, ռազմաճակատ, ագրեսիա

## Ներածություն

2016 թ. գարնանային ռազմարշավում[1] Արցախի Հանրապետության(ԱՀ) պաշտպանության բանակի (ՊԲ) համառ դիմադրության շնորհիվ հաջողվեց ձախողել

* *Ներկայացվել է 21.II.2024 թ., գրախոսվել է 25.II.2024 թ., ընդունվել է տպագրության 07.VI.2024 թ.:*

[1] 2016, 2020 և 2023 թվականների ռազմական գործողությունների տերմինաբանության քննությունը ներկայացրել ենք 2023 թ. դեկտեմբերի 4-5-ը ԵՊՀ կազմակերպած «Պատմության կեղծարարություն և իրականություն» թեմայով գիտաժողովում: Մեր «Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի նորօրյա պատմության խեղաթյուրումների մասին» զեկուցման հիման վրա շարադրված գիտական հոդվածը տպագրության ընթացքում է:

ագրեսիան վերսկսած Ադրբեջանի զինված ուժերի (ԶՈՒ) ստրատեգիական պլանները: Սակայն, ԱՀ ՊԲ կազմակերպական, ղեկավարման, մարտավարության, մարտական պատրաստության և այլ ասպարեզներում ակնհայտ դարձան մի շարք թերություններ ու բացթողումներ: Այս հարցերը ԶՈՒ ղեկավար մարմինների ու անմիջական պատասխանատուների առանձնահատուկ քննարկման նյութ դարձան, ինչի արդյունքում վերլուծվեցին 2016 թ. ռազմարշավի արդյունքները և կազմվեց թերությունների վերացման պլան: Այդ բովանդակությամբ փաստաթղթերը հույժ գաղտնի ծածկագրի տակ են կամ ոչնչացվել են 2023 թ. սեպտեմբերին:

Հակառակորդը 2016 թ. գարնանային ռազմարշավում ակամա բացահայտեց ԱՀ-ը զավթելու իր նպատակի իրականացման ստրատեգիական պլանի որոշ էական մանրամասներ: Մասնավորապես, բացահայտվեցին Ադրբեջանի ԶՈՒ ստրատեգիական հարձակման գլխավոր՝ Հարավային (Ջրական) և Հյուսիսային (Թալիշ-Մատաղիս) ուղղությունները: Բացի այդ, 2016-ից հետո Թուրքիայի ռազմական մասնագետների և կենդանի ուժի ու սպառազինության ներգրավմամբ ինտենսիվ զորավարժությունների ընթացքում ակնհայտ դարձավ, որ ադրբեջանաթուրքական հրամանատարությունը նախապատրաստվում է ժամանակակից տեխնոլոգիաների ու ՆԱՏՕ-ական մարտավարության կիրառմամբ ԱՀ ԶՈՒ-ի նկատմամբ անհամադրելի առավելության հասնել:

Սակայն, 2020 թ. աշնանային ագրեսիային ԱՀ ՊԲ-ի անբավարար պատրաստ լինելը և վերոնշալ ու այլ ակնհայտ ազդակների անտեսմամբ վերահաս սպառնալիքները չկանխելը, ինչպես նաև այլ լրացուցիչ փաստեր հիմք են տալիս կասկածի տակ դնելու 2016 թ. գարնանային ռազմարշավի վերլուծության ու համապատասխան հետևությունների թելադրանքով ԱՀ ՊԲ-ում ձեռնարկված միջոցների արդյունավետությունը: Կասկածելու հիմքերի ստուգման և բարձրացված հիմնահարցի ուսումնասիրման աղբյուրագիտական ատաղձը կազմել են «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվում պահվող վավերագրերը[2], ԱՀ ՊՆ «Մարտիկ»[3] և ՀՀ ՋՈՒ «Հայ զինվոր»[4] պաշտոնաթերթերի հրապարակումները, 2016 թ. իրադարձություններին էլեկտրոնային ու տպագիր ՋՏՄ-ների անդրադարձները[5], թեմային վերաբերող գրականության[6] սուղ տեղեկությունները:

**Մարտական պատրաստությունը նոր իրադրությունում**

ԱՀ ՊԲ զինծառայողներին ԱՀ պաշտպանության

---

[2] «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ (ԿԳԿԱ), ֆ. 9, գ. 12, թթ. 1-75:

[3] Մարտիկ. № 13, 15-16, 17-18:

[4] Հայ զինվոր. № 13, 17:

[5] **Մենեմշյան.** 2018, 103-110: **Տեր-Աբրահամյան** 2019:

[6] Հայաստան-2016. չսերտած դասեր. 2016, 16-35, 55-86: **Խաչատրյան.** 2016, մաս I, № 4, 104-115, մաս II, № 5, 114-117, մաս III, № 6, 108-116: **Մինասյան.** 2016, № 4: **Հասրաթյան.** 2017: **Հովհաննիսյան.** 2017, 448-464: **Макиенко.** 2018, 155-168. **Հարությունյան.** 2021, 167-172:

նախարար-պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լ. Մնացականյանի[7] 2016 թ. մայիսի 1-ի կոչում կարևոր մի շեշտադրում կա, որը կարող է հիմք դառնալ 2016 թ. գարնային ռազմարշավը «քառօրյա պատերազմ» համարելու սխալը սրբագրելու համար: Այդ փաստաթղթում արձանագրված է հետևյալը. «Հակառակորդի կողմից մեզ վերստին պարտադրված պատերազմը չի ավարտվել, ռազմաճակատային հաղորդագրությունները վկայում են, որ թշնամին դեռ գլխովին ջախջախված չէ»[8]: Նշվածը հաստատվում է նաև 2016 թ. մայիսի 19-ի թվակիր մեկ այլ վավերագրում. «Ակտիվ մարտական գործողություններից ավելի քան մեկ ամիս անց օպերատիվ իրադրությունն առաջնագծում մնում է լարված, հակառակորդն անընդհատ խախտում է հրադադարի վերաբերյալ բանավոր պայմանավորվածությունը: Ներկայումս ՊԲ-ի՝ ըստ պատերազմական ժամանակի հաստիքների համալրված ստորաբաժանումներն իրականացնում են և՛ մարտական հերթապահություն, և՛ հուսալի դիրքային պաշտպանություն: Ակտիվ մարտական գործողությունների ավարտից հետո հակառակորդը դիրքերի ինժեներական կահավորման լայնածավալ աշխատանքներ է իրականացնում»[9]: Մյուս կողմից,

---

[7] Լ. Մնացականյանը 2023 թ. սեպտեմբերի 29-ին Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից Արցախի տարածքում ձերբակալվել է և առ այսօր բանտարկված է Բաքվում:

[8] ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 26:

[9] ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 63:

հատկանշելի է, որ վերոհիշյալ կոչից մեջբերման շարունակության մեջ ճիշտ հետևություն է արված. «Մշտապես պետք է հիշել, որ մեր ոխերիմ թշնամին անընդհատ մտմտում է լայնածավալ գործողություններ սկսել և պետք է պատրաստ լինենք դարձյալ հակահարված հասցնելու ագրեսորներին»[10]: Սա կարելի է նաև ընդունել որպես ԱՀ ՊԲ հրամանատարական կազմի կատարմանը ներկայացված ուղենշող-ղեկավար փաստաթուղթ՝ օպերատիվ-մարտավարական նոր իրադրությանը համապատասխան մարտական պատրաստությունը կազմակերպելու համար:

Լ. Մնացականյանը բարձր է գնահատել ԱՀ ՊԲ մարտունակությունը. «Հիմա մեր բանակը,- մասնավորապես նշել է նա,- մարտական բարձր պատրաստականությամբ, խոր շարակարգված պաշտպանական բնագծերում ամրացած, բավարար սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով, հմտավարժ ռազմական մասնագետներով համալրված, պատրաստ է այնպիսի հուժկու և ջախջախիչ հակահարված հասցնել լկտիացած թշնամուն, որ դրանից նա այլևս երբեք ուշքի գալ չկարողանա»[11]:

2016 թ. գարնանային ռազմարշավից հետո ՊԲ մարտունակության վերաբերյալ գաղտնազերծված փաստաթղթերում բավարար տեղեկություններ չկան: Սա-

[10] ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 26:

[11] ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 26:

կայն, Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից զինադադարի վերաբերյալ ՌԴ առաջարկին համաձայնելը և հակառակորդի համազորային զորքերի հարձակողական գործողությունների մեկնարկային թափը կորցնելը, մտածել են տալիս, որ ինտենսիվ մարտական գործողությունների արդյունքներից ելնելով ադրբեջանական հրամանատարությունն անբավարար է համարել հաղթանակի հասնելու հնարավորությունները:

2016 թ. գարնանային ռազմարշավից հետո ԱՀ ԶՈՒ-ում ձեռնարկված միջոցների գաղափարական հիմնավորման մասին որոշակի պատկերացում են տալիս ԱՀ ՊԲ հրամանատարի վերոհիշյալ կոչի հետևալ տողերը. «Առաջնագծի ամրակառույցների մշտական կատարելագործման ու զինծառայողների անհատական պաշտպանության հնարավորությունների ընդլայնման[12] միջոցով կարող ենք հաջողությամբ մարտ վարել՝ միևնույն ժամանակ խուսափելով անհարկի կորուստներից»[13]: Անշուշտ, յուրաքանչյուր պետության ԶՈՒ-ի վերջնանպատակն արտաքին ագրեսիայից երկիրը պաշտպանելն է նաև թշնամուն գլխովին ու վերջնականապես

[12] 2020 թ. աշնանային ռազմարշավի փորձը ցույց տվեց, որ 2016 թ. ի վեր ՊԲ առաջնագծում իրականացված ամրաշինական աշխատանքները ակնհայտորեն անբավար էին և ամենևին հուսալի չէին Ադրբեջանի՝ հիմնականում անթաքույց ձեռք բերած ժամանակակից հարձակողական, գերճշգրիտ զենքերի ու հարվածային անօդաչու թռչող ապարատների (ԱԹԱ), թափառող արկերի ու հեռահար հրթիռների ավերիչ ուժի դիմաց:

[13] ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 26:

ջախջախելու միջոցով: Այս տեսակետից ՊԲ նախկին հրամանատարի հետևյալ խոսքերը թեև արտառոց չեն, բայց իրականացնելու հնարավորությունների և բավարար ներուժի առումներով կասկածելի են: Լ. Մնացականյանը գտնում էր, որ «Ժամկետային զինծառայողների, մեր քաջարի սպաների ու կամավորական-ազատամարտիկների, մեր փառապանծ հրետանավորների, տանկիստների, հակաօդայինների, սակրավորների, մյուս զորատեսակների և, իհարկե, մեր առյուծասիրտ հետևակայինների ներդաշնակ գործողությունների արդյունքում թշնամին կջախջախվի գլխովին ու վերջնականապես»[14]: ՊԲ հրամանատարի այդ ինքնավստահության հիմքը ԱՀ ՊԲ անձնակազմի մարտավարամասնագիտական ու բարոյահոգեբանական որակներն էին. «Դա հնարավոր է, - գտնում էր նա, - յուրաքանչյուր մարտիկի ու հրամանատարի մարտավարական ունակությունների, համակողմանի մասնագիտական պատրաստականության ամենօրյա ու հետևողական կատարելագործման շնորհիվ»[15]:

Ընդ որում, ԱՀ ՊԲ անձնակազմի բարոյահոգեբանական ու մարտավարամասնագիտական որակների մասին Լ. Մնացականյանի համոզմունքը հիմնված էր նաև 1991-1994 թթ. պատերազմական գործողությունների արդյունքների և հակամարտ կողմերի ուժերի հարաբե-

[14] ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 26:

[15] ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 26:

ռակցության համադրության վրա: Այդ են վկայում ԱՀ ՊԲ միավորումների ու զորամասերի հրամանատարների համար նախատեսված վերլուծական նյութի հետևյալ տողերը. «Բոլոր հաշվարկները կառուցելով ժամանակակից սպառազինության կիրառման և հարձակման անսպասելիության վրա՝ հակառակորդը հույս ուներ էական հաջողության հասնելու, սակայն, ապարդյուն, որովհետև ինչպես 1991-1994 թթ., այնպես էլ 2016-ի ապրիլի սկզբին հաշվի չի առել հայ զինվորի բարձր բարոյամարտական ոգին, ամենաանելանելի իրավիճակում անգամ համախմբվելու և անօրինակ սխրագործության դիմելու նրա ընդունակությունը, սահման պաշտպանող զինվորի կողքին կանգնելու համաժողովրդական պատրաստակամությունը ու այլ հատկություններ, որոնց շնորհիվ ՊԲ նշված զորամասերի մարտական հերթապահություն իրականացնող ստորաբաժանումների մարտիկները կարողացել են անհավասար պաշտպանական մարտերում կասեցնել հակառակորդի հարձակումը, նրան պատճառել կենդանի ուժի և սպառազինության ու ռազմական տեխնիկայի զգալի կորուստներ»[16]:

Հարկ է նշել, որ 2016 թ. գարնանային ռազմարշավում Ադրբեջանի ՋՈՒ-ում փորձարկվել է հոգեմետ դեղամիջոցներով անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը բարձրացնելու հնարավորությունը և, դատելով այն փաստից, որ նույնը 2020 թ. աշնանը զանգվածաբար

[16] ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 62:

կիրառվել է Ադրբեջանի ԶՈՒ -ում, հատկապես հատուկ նախանշանակման ստորաբաժանումներում և ԱՀ ՊԲ առաջնագիծը գրոհող վարձկանների ու այլ ուժերի խմբերում[17], կարելի է եզրակացնել, որ այդ փորձարկման արդյունքները, ըստ երևույթին, գոհացրել են ագրեսոր երկրի ռազմաքաղաքական ղեկավարությանը: Ցավալին այն է, որ ԱՀ ՊԲ հրամանատարությունն, ըստ երևույթին, անտեսել է հակառակորդի բարոյահոգեբանական վիճակը արհեստականորեն բարձրացնելու հնարավորությունը: Մյուս կողմից, 1994 թ. զինադադարից հետո Ադրբեջանի ամբողջ հասարակությունը, պետական քարոզչամեքենայի նպատակաուղղված գործունեության հետևանքով, թունավորվել ու ատելությամբ է լցվել ամեն հայկականի ու հայ ժողովրդի նկատմամբ: Հայատյացությունը, հակահայկական քարոզչությունը և ապատեղեկատվությունը (կեղծարարությունը) Ադրբեջանում պետական քաղաքականության անբաժանելի բաղադրամասերն են առայսօր[18]:

---

[17] Սիրիացի վարձկանների ցուցմունքների համաձայն՝ Ադրբեջանը վախի դեմ դեղահաբեր է բաժանել գրոհայիններին/ https://armenpress.am/–arm/news/1034060 (ներբեռնումը՝ 10.02.2024 թ.), По показаниям сирийских наемников, Азербайджан раздавал боевикам психотропные вещества/ https://armenpress.am/rus/news/1034060 (дата обращения: 10.02.2024 г.), Манукян В., Азербайджан подсел на наркотики (2021-08-14 12:04)/ https://www.golosarmenii.am/article/126280/podsel-na-narkotiki (дата обращения: 10.02.2024 г.).

[18] Армянофобия в Азербайджане (исследование проведено с августа 2022 года по февраль 2023 года) https://www.luys.am/img/artpic/small/c–75ff2c8e4-ab023614e4%D0%90%D1%80%D0%BC%D1%8F%D0%BD%D0%BE%D1%84%D0%BE%D0%B1%D0%B8%D1%8F%D0%B2%D0%90%D0%B7%D0%B5%D1%

Այս ամենին հավուր պատշաճի չվերաբերվելով ու համապատասխան բավարար միջոցներ չձեռնարկելով՝ ԱՀ ՊԲ հրամանատարությունը, մինչև անգամ ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը շարունակել են ԶՈՒ մարտավարության ու ռազմավարության բարոյահոգեբանական ապահովման ասպարեզում հույսը դնել անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստության ու ռազմահայրենասիրական դաստիարակության շնորհիվ նրա ձեռքբերած մարտական ոգու վրա. «Քառօրյա մարտերի ընթացքում, - գրել է ԱՀ ՊԲ հրամանատարը,- հայ մարտիկները ցուցաբերել են զանգվածային հերոսություն, ամուր կամք, մինչև վերջին փամփուշտը կռվելու և հակառակորդին հաղթելու վճռականություն: Հայ զինվորին բնորոշ որակները՝ անձնական խիզախությունը, վստահված սպառազինությանն ու ռազմական տեխնիկային հիանալիորեն տիրապետելն ու հարկ եղած դեպքում այն հնարամտորեն, ստեղծագործաբար կիրառելը, հրամանատարական կազմի արհեստավարժությունն ու մասնագիտական գիտելիքները հնարավորություն են տվել արդեն մարտերի սկզբնական փուլում ձախողել հակառակորդի բոլոր հաշվարկները»[19]:

Իհարկե, արդեն 2020 թ. աշնանային ռազմարշավում ԱՀ ՊԲ անձնակազմի և ՀՀ-ից օգնության հասած կա-

---

80%D0%B1%D0%B0%D0%B8%CC%86%D0%B4%D0%B6%D0%B0%D0%BD%D0%B5.pdf (дата обращения: 10.02.2024 г.).

[19] ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 62:

մավորականների օժտվածությունը վերոհիշյալ որակական հատկանիշներով օգնել է միառժամանակ հաջողությամբ կասեցնել Ադրբեջանի գերակշռող կենդանի ուժի ու միջոցների ագրեսիան, սակայն, դժբախտաբար, բավարար չի եղել, այլ գործոնների բացակայության պայմաններում, բեկում մտցնելու պատերազմական գործողությունների մեջ և թշնամուց խլելու ռազմական նախաձեռնությունը:

**Հակառակորդի նախապատրաստությունների թերագնահատումը**

2014 թ. մինչև 2016 թ. ապրիլի 1-ը (ըստ ՀՀ և ԱՀ ՊՆ ներկայացուցիչների՝ մամուլում շրջանառված հաղորդումների) Ադրբեջանի ԶՈՒ-ն իր դիվերսիոն-հետախուզական խմբերին մարտական կիրառման նպատակով ներգրավել է առնվազն 150 դիվերսիոն ներթափանցման փորձերի՝ գործի դնելով ականանետային, հրետանային և այլ միջոցներ: Դրանք, փաստորեն, լայնամասշտաբ պատերազմական գործողությունների նախապատրաստություններ էին, որոնք ԱՀ ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական ղեկավարության համարժեք գնահատականին չարժանացան: 2016 թ. գարնանային ռազմարշավի հետևանքների լույսի ներքո կարելի է կարծել, որ նաև անհրաժեշտ հետևություններ չկատարվեցին, իսկ ձեռնարկված միջոցները երբեմն ցուցադրական ու խիստ անբավարար էին, ինչն ակնհայտ դարձավ 2020

թ. սեպտեմբերի 27-ին թշնամու սանձազերծած լայնամասշտաբ ռազմական գործողությունների ընթացքում, երբ արտակարգ (պատերազմական) իրավիճակում պետական կառավարման համակարգն անկարող գտնվեց պետությունը տեղափոխել ռազմական ռելսերի վրա, իսկ հրամկազմի գործողությունները, երբեմն նաև կաշկանդված լինելով քաղաքական իշխանությունների սխալներով, արդյունավետ չէին, ունեին կազմակերպական ու մարտավարական լուրջ թերություններ, որոնք բացասաբար էին անդրադառնում ռազմաճակատում մարտական խնդիրներ կատարող ստորաբաժանումների և ըստ իրադրության սեփական նախաձեռնությամբ մարտեր վարող անձնակազմերի մարտունակության վրա[20]:

1994-2016 թթ. թշնամու պարտադրած դիվերսիոն-հետախուզական և դիպուկահարային պատերազմին հայկական կողմը հակադարձել է համարժեք գործողություններով՝ ձգտելով անպատասխան չթողնել նշված սադրիչ արտագրոհները: Որպես կանոն կիրառվել են նաև պատժիչ կամ վրիժառության գործողություններ ինչպես դիպուկահարների, այնպես էլ դիվերսիոն-հետախուզական խմբերի հատուկ օպերացիաների կիրառմամբ: Դրանց ռազմավարությունը կարծես թե թշնամուն իր թվական ու ռազմատեխնիկական գերազանցության միջոցով կոշտ ուժի կիրառման և դրանով

[20] **Հարությունյան.** 2021, 167-168:

քաղաքական հարցերը լուծելու հնարավորության անհեռանկարայնության մեջ համոզելն էր[21]:

**ԱՀ ՊԲ անձնակազմի մարտական ու ոչ մարտական կորուստները**

Ռազմաճակատի մի քանի հատվածներում լարված մարտական հեթապահություն կրելը, առավել ևս հակառակորդի խաբուսիկ հանգստությունը 2016 թ. և դրանից հետո երբեմն պատճառ են դարձել ԱՀ ՊԲ որոշ զինծառայողների զգոնության թուլացմանը, առաջացրել անտարբերություն, ձևական վերաբերմունք ծառայողական պարտականությունների կատարման հանդեպ: Այդ ամենը հանգեցրել է անվտանգության և զենքի օգտագործման կանոնների խախտումների, հրամանատարության կողմից վերահսկողության թուլացման, ինչի հետևանքով եղել են անտեղի կորուստներ: 2016 թ. ապրիլի 7-ից մինչև մայիսի 19-ը ԱՀ ՊԲ-ն ունեցել է տասնյոթ զինծառայողի կորուստ: Նրանցից երեքը զոհվել են հակառակորդի հրետանու կրակի, երեքը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման, մեկը՝ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգության կանոնների խախտման, իսկ տասներեքը՝ հակառակորդի կողմից խոցվելու հետևանքով:

Լ. Մնացականյանի վերոհիշյալ վերլուծական նյութում անչափ մտահոգիչ, սխալ ու անչափ վտանգավոր մոտե-

[21] **Հարությունյան.** 2021, 167-169:

ցում է համարվել սեփական կորուստների ընկալման հոգեբանության փոփոխությունը: Եթե նախկինում հակառակորդի կողմից ԱՀ ՊԲ զինծառայողի յուրաքանչյուր խոցման դեպք համարվում էր իր տեսակի մեջ բացառիկ արտակարգ պատահար, ապա հիմա հակառակորդի գնդակից զինծառայողի վիրավորվելու կամ զոհվելու փաստը հաճախ ընկալվում է որպես սովորական, ստեղծված իրավիճակում ինչ-որ առումով անխուսափելի երևույթ:

Եթե 2016 թ. ապրիլի առաջին չորս օրերին ԱՀ ՊԲ կորուստները եղել են մարտադաշտում, արյունահեղ մարտերի ընթացքում, ապա հետագա կորուստներից հնարավոր էր և անհրաժեշտ էր խուսափել: Յուրաքանչյուր զինվորի զոհվելը բացասաբար էր ազդում զորքերի բարոյահոգեբանական վիճակի վրա:

Անտեղի մարդկային կորուստները բացառելու նպատակով ԱՀ ՊԲ հրամանատարությունն անհրաժեշտ է համարել. ա) բոլոր կարգի հրամանատարների անմիջական մասնակցությունը պաշտպանության կազմակերպմանը, բ) լուրջ ուշադրություն դարձնել դիրքերի ինժենեռական առումով ճիշտ կահավորմանը, գ) մշտական վերահսկողություն իրականացնել մարտական հերթապահությունում ընգրկված անձնակազմի նկատմամբ՝ բացառելով խտրական վերաբերմունքը զորահավաքային ռեսուրսի և ժամկետային զինծառայողների նկատմամբ, դ) անշեղորեն հետամուտ լինել վերադաս հրամանատա-

ության ցուցումների և հրամանների կատարմանը և մշտապես նույնը պահանջել ենթականերից, ե) ձեռնարկել գործուն միջոցներ՝ մարտական հերթապահության ընդգրկված անձնակազմի զգոնության բարձրացման ուղղությամբ, զ) լուրջ ուշադրություն դարձնել մարտական խնդիրների կատարմանը ընդգրկված անձնակազմի հրահանգավորմանը, անվտանգության կանոնների իմացությանն ու պահպանմանը[22]:

ԱՀ ՊԲ հրամանատարության առաջադրված խնդիրների համաձայն ձեռնարկված միջոցների և վերահսկողության ուժեղացման շնորհիվ անձնակազմի շրջանում ոչ մարտական կորուստների թիվը 2016 թ. հետագա ամիսներին նկատելիորեն նվազել է: Ըստ բարոյահոգեբանական ապահովման և անձնակազմի հետ տարվող աշխատանքների ոլորտի պատասխանատուների հավաստիացումների՝ նույն դինամիկան է նկատվել նաև մարտական կորուստների առումով՝ մարտական հերթապահություն ու դիրքային պաշտպանություն իրականացնող զինծառայողների զգոնության բարձրացման շնորհիվ[23]:

Մարտական պատրաստության ու մարտավարության կատարելագործման ոլորտներում ձեռնարկված միջոցների մասին պատկերացում կարող է տալ ԱՀ ՊԲ-ի 2016 թ. պատրաստության պլանի համաձայն՝ նոյեմբերի

---

[22] ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 65:

[23] Մարտիկ. 2017, № 9-10:

4-ից 8-ը կենտրոնական ենթակայության մի շարք զորամասերի հետ անցկացված քառափուլ գնդային-մարտավարական զորավարժությունը: Դրա թեման էր «Զորամասերի դուրսբերում մարտական կիրառման շրջաններ՝ հակառակորդի հանկարծակի հարձակման պայմաններում, վերախմբավորման իրականացում, պաշտպանական մարտի վարում, մխրճված հակառակորդի ջախջախում և առաջնագծի վերականգնում, այնուհետև՝ դիրքերի բարելավման նպատակով հարձակողական մարտի վարում և նպաստավոր դիրքերի զբաղեցում»[24]: ԱՀ ՊԲ հրամանատարի գնահատմամբ, այդ զորավարժության թեման բխում էր վերջին շրջանում հակառակորդի գործողություններից և արդյունավետ է եղել նմանատիպ իրավիճակներում շտաբների ներդաշնակումը: Զորավարժությունը հնարավորություն է ընձեռել մեկ անգամ ևս ստուգելու ԱՀ ՊԲ զորքերի պատրաստականությունը, տեղում որոշումներ ընդունելու և իրագործելու հրամանատարության գործնական ունակությունները: Զորավարժությանն ընդգրկված զինծառայողները հայտնվել են մարտականին մոտ այնպիսի իրադրությունում, որտեղ պարզորոշ դրսևորվել են նրանց ռազմական ունակությունները: Դրանք ԱՀ ՊԲ հրամանատար Լ. Մնացականյանի համոզմամբ՝ ցույց են տվել, որ «մեր զինծառայողները, ստորաբաժանումներն ու դրանց հրամանատարները ի զորու են կատարել իրենց առջև

[24] Մարտիկ. 2016, № 45-46:

դրված խնդիրը, ավելին՝ կարող են իրականացնել նաև այլ բնույթի մարտական գործողություններ»[25]:

**Եզրակացություններ**

Անշուշտ, 2016 թ. գարնանային ռազմարշավից հետո ԱՀ ՊԲ-ում ձեռնարկված միջոցների արդյունավետության մասին փաստերի ու հրապարակումների շարքը կարելի է շարունակել, բայց 2020 թ. աշնանային ռազմարշավում ունեցած ճակատագրական անհաջողությունները, պատճառահետևանքային կապի շրջանակներում, թույլ չեն տալիս դրանք գնահատել տեղեկատվական-քարոզչական հարթությունից դուրս՝ որպես իրական արդյունք: Ամեն մի ձեռնարկում, միջոցառում, գործողություն գնահատվում է նախ և առաջ իր դրական վերջնարդյունքով: Սակայն, 2020 թ. աշնանային ռազմարշավի փորձությունը ցույց տվեց, որ 2016 թ. գարնանային ռազմարշավից հետո ԱՀ ՊԲ-ում ձեռնարկված միջոցների արդյունավետությունը, նաև այլ հանգամանքների ու օբյեկտիվ պատճառների ազդեցությամբ, բավարար չի եղել: Առաջնագծի տեսադիտարկման համակարգերի ցանցի ստեղծման, զինամթերքի անհրաժեշտ պաշարների կուտակման, կապի միջոցների կատարելագործման, անձնակազմի կենցաղային պայմանների բարելավման և այլ ուղղություններով ձեռնարկված քայլերը թերևս ավելի երկարաժամկետ ապագայի համար էին

[25] Մարտիկ. 2016, № 45-46:

նախատեսված՝ թերագնահատելով թշնամու անթաքույց ռազմական նախապատրաստությունները և մշտական սպառնալիքներից անմիջական ագրեսիայի անցնելու վերահաս վտանգը:

Իրադրության, մարտահրավերների ու ռազմական ներխուժման սպառնալիքների օբյեկտիվ գնահատմանը և անհետաձգելի միջոցներ ձեռնարկելուն խանգարել են ինչպես ՀՀ և ԱՀ ռազմաքաղաքական ղեկավարության կոպիտ սխալները[26], փոփոխված աշխարհաքաղաքական իրադրության անտեսմամբ՝ դաշնակիցների ու միջազգային դերակատարների հետ անհամարժեք փոխհարաբերությունները և դրանցից բխող, բայց չարդարացված ակնկալությունները, ներքաղաքական լարվածությունը, այնպես էլ քաղաքական նպատակահարմարությանն ու ամբոխավարությանը համահունչ գունազարդված հասարակական կարծիք ձևավորելուն նպատակաուղղված տեղեկատվական-քարոզչական էյֆորիկ քաղաքականությունը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Բրուտենց Գ.** 2020, Պարտության համը. ինչպե՞ս տանուլ տրվեց պատերազմը (29 November 2020) https://acnis.am/en/–analysis/39-2020. ներբեռնումը՝ 11.02.2024 թ.:

**Խաչատրյան Մ.** 2016, Արցախի 2016 թ. ապրիլյան Քառօրյա պատերազմը և պատերազմների էվոլյուցիան,

[26] **Բրուտենց.** 2020:

«Անդին» (գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական ամսագիր), Երևան, մաս I, № 4, ապրիլ, էջ 104-115, մաս II, № 5, մայիս, էջ 114-117, մաս III, № 6, հունիս, էջ 108-116:

«Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ (ԿԳԿԱ), ֆ. 9, գ. 12, թթ. 1-75:

Հայ զինվոր (ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ) 2016, № 13, 17: Հայաստան-2016. չսերտած դասեր 2016, Մանվել Սարգսյան (գիտ. խմբ.), Ռազմավարական և ազգային հետազոտու–թյունների հայկական կենտրոն, Երևան, ՌԱՀՀԿ, 230 էջ:

**Հասրաթյան Ս.** 2017, Ապրիլյան քառօրյա առճակատում: (Արցախ. 02-05.04.2016 թ.), Տ. Առուշանյան (խմբ.), Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 168 էջ:

**Հարությունյան Մ.** 2021, Արցախում ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները, Շուշի-Երևան, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 352 էջ:

**Հովհաննիսյան Ա.** 2017, Ռազմարվեստի զարգացումը 20-րդ դարում. հեռանկարներ: Համառոտ ուսումնասիրություն, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 661 էջ:

Մարտիկ (ԼՂՀ ՊՆ պաշտոնաթերթ) 2016, №№ 13-18, 45-46:

Մարտիկ 2017, № 9-10:

**Մինասյան Ս.** 2016, Ապրիլյան չորսօրյա պատերազմը. պատճառներ և հետևանքներ, «Անդին» ամսագիր, Երևան, № 4, էջ 22-24:

**Մենեմշյան Ա.** 2018, Քառօրյա պատերազմ. մեդիաար–ձագանքներ, «Ժուռնալիստկա և հաղորդակցություն», № 1 (13), Երևան, «ԵՊՀ», էջ 103-110:

Սիրիացի վարձկանների ցուցմունքների համաձայն՝ Ադրբեջանը վախի դեմ դեղահաբեր է բաժանել գրոհայիններին/ https://armenpress.am/arm/news/1034060 (ներբեռնումը՝ 10.02.2024 թ.).

**Տեր-Աբրահամյան** 2019, Ապրիլյան պատերազմի այլընտրանքային պատմությունը (https://timestream.mediamax.am/story/12 ներբեռնումը՝ 29.04.2020 թ.):

Армянофобия в Азербайджане (исследование проведено с августа 2022 года по февраль 2023 года) https://www.luys.am/img/artpic/small/75ff2c8e4ab023614e4АрмянофобиявАзербайджане.pdf

**Макиенко К.** (ред.) 2018, В ожидании бури: Южный Кавказ (Авторы: М.С. Барабанов, М. Йешильташ, А.В. Лавров, Н.А. Ломов, Ю.Ю. Лямин, Л. А. Нерсисян, А.В. Никольский, М. Серен, И. А. Топчий), Москва, Центр анализа стратегий и технологий, 200 с. (Ссылка на электронную версию: http://cast.ru/upload/iblock/-b0a/b0a00906a408158d431afb51cdee7440.pdf)

**Манукян В.** 2021, Азербайджан подсел на наркотики (2021-08-14 12:04)/ https://www.golosarmenii.am/article/126280/podsel-nanarko-tiki (дата обращения: 10.02.2024 г.).

По показаниям сирийских наемников, Азербайджан раздавал боевикам психотропные вещества/ https://armenpress.am/rus/news-/1034060 (дата обращения: 10.02.2024 г.).

**Мгер А. Арутюнян,** *Институт истории НАН РА, к.и.н., доцент,* **К вопросу эффективности мер, принятых в Армии Обороны Республики Арцах после весенней кампании 2016 года**

## Резюме

Во время весенней кампании 2016 г., благодаря упорному сопротивлению Армии Обороны (АО) Республики Арцах (РА), в целом удалось сорвать стратегические планы Вооруженных Сил (ВС) Азербайджана, которые возобновили агрессивные военные действия. Однако выявился ряд недостатков и упущений в организации, управлении и тактике, в том числе в обороне и контрнаступлении, боевой подготовке и других областях деятельности ВС РА. Несомненно, эти вопросы стали предметом специального обсуждения руководящих органов и непосредственных военачальников ВС, в результате чего еще в 2016 г. был проведен анализ результатов кампании и составлен план по устранению недостатков. Хотя подобные документыхранятся под грифом «совершенно секретно», можно заметить некоторые показательные факты, которые вызывают сомнения об эффективности принятых мер в АО РА. Неэффективность проявилась в недостаточной подготовке к осенней агрессии 2020 г. и игнорировании очевидных угроз и вызовов.

В 2020 г. храброст талант и преданность личного состава ВС РА и добровольцев, пришедших на помощь из Армении, на некоторое время сдерживали агрессию преобладающих азербайджанских сил, но, к сожалению, этого оказалось недостаточным для перелома в ходе боевых действий и перехвата военной инициативы у противника.

Хотя существует множество фактов и публикаций о эффективности принятых мер в ВС РА после весенней кампании

2016 года), однако фатальные провалы осенней кампании 2020 г. не позволяют оценить их как реальные достижения) вне информационно-пропагандистского контекста.

***Ключевые слова:*** Республика Арцах, Армия Обороны, штаб, кампания, личный состав, фронт, агрессия.

**Mher A. Harutyunyan,** *Institute of History of NAS RA, PhD in History, Associate Professor,* **On the effectiveness of measures taken in the Defense Army of the Republic of Artsakh after the spring campaign of 2016**

## Summary

In the spring campaign of 2016, due to the steadyfest resistance of the Defense Army (DA) of the Republic of Artsakh (RA), in general it was possible to thwart the strategic plans of the Armed Forces (AF) of Azerbaijan, which resumed aggressive warfare. However, a number of shortcomings and omissions in the organization, management, tactics, including defense and counter-offensive strategies, combat training and other areas of activity of the RA DA were revealed. Undoubtedly, these issues have been the subject of special discussion of the governing bodies and direct military commanders of the Armed Forces, leading to the analysis of campaign outcomes as early as 2016 and the formulation of plan to address the shortcomings. Although such documents are inaccessible to us being classified as "top secret", certain revealing facts cast doubt on the effectiveness of measures taken in the RA AO. Ineffectiveness lies in insufficient preparation for the fall aggression of 2020 and ignoring obvious threats and challenges.

In 2020, the skill of the personnel of the RA Armed Forces and

volunteers from Armenia, albeit briefly, contributed to halting the aggression of the prevailing Azerbaijani forces. Unfortunately, it was not enough, in the absence of other factors, to make a break in hostilities and intercept the military initiative from the enemy.

Although there are many facts and publications about the effectiveness of the measures taken in the Armed Forces after the spring campaign of 2016, however, the catastrophic failures of the fall 2020 campaign make it impossible to assess them as a genuine outcomes outside the the context of propaganda.

***Key words:*** Republic of Artsakh, Defense Army, headquarters, campaign, personnel, front, aggression.